ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ
ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012-2015ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ..... 3

2. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 6

3. ԷԹԻԿԱ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ 12

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 15

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հաշվետվությունում ներկայացվում են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի՝ (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012-2015թթ. կատարած աշխատանքներն ու դրանց հիմնական արդյունքները:

Հանձնաժողովը կազմավորվել է 2012 թվականի հունվարի 9-ին՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Հանձնաժողովի հինգ անդամները նշանակվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից՝ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, վճռաբեկ դատարանի նախագահի և գլխավոր դատախազի ներկայացմամբ՝ վեց տարի ժամկետով: Հանձնաժողովն իր կազմից ընտրել է հանձնաժողովի նախագահ և նախագահի տեղակալ:

Հանձնաժողովն իրականացրել է հանրային էթիկայի ոլորտի օրենսդրության և Հանձնաժողովի կազմակերպական զարգացմանը, էթիկայի համակարգի արդյունավետ ինստիտուցիոնալացմանը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց բարեվարքության խթանմանը, էթիկայի սկզբունքների և կանոնների հիման վրա էթիկայի կանոնագրքերի մշակմանը և ընդունմանը, շահերի բախման կանխարգելման գործնականում կիրառելի կառուցակարգերի ներդրմանը, ինչպես նաև Հանձնաժողովի՝ պետական մարմինների հետ համագործակցության և հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված քայլեր:

Հանձնաժողովի կարևորագույն ձեռքբերումներից է գույքի և եկամուտների էլեկտրոնային հայտարարագրման համակարգի գործարկումը, որն ապահովում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց ակտիվների հայտարարագրման գործընթացի պարզեցումը և արդյունավետությունը, ինչպես նաև Հանձնաժողովի կայքէջում հայտարարագրերի հրապարակման միջոցով դրանց թափանցիկությունը և հանրային հասանելիությունը: Հանձնաժողովի կողմից կատարվել է մեծածավալ աշխատանք՝ ուղղված ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծության բաղադրիչի զարգացմանը:

Հանձնաժողովն իրականացրել է նաև միջազգային կառույցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցության ամրապնդմանն ուղղված մի շարք նախաձեռնություններ, որոնք միտված են եղել էթիկայի համակարգի բացերի գնահատմանը, էթիկայի խնդիրների լուծման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությանը և դրա տեղայնացմանը:

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հանձնաժողովի ինստիտուցիոնալ զարգացումն ապահովելու, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեությունն ապահովող իրավական կառուցակարգերը բարելավելու ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք քայլեր, մասնավորապես.

- մշակվել են Հանձնաժողովի 2016-2018թթ. ռազմավարության, ինչպես նաև դրա իրականացման տարեկան գործողությունների ծրագրի նախագծերը, որոնք ՏՀԶԿ «SIGMA» ծրագրի փորձագիտական խմբի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ներկայացվել են միջազգային փորձագիտական եզրակացության.
- կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմինների գործառույթների և կառուցվածքային հարցերի առնչությամբ իրականացվել է միջազգային փորձի համալիր ուսումնասիրություն, որի հիման վրա մշակվել են Հանձնաժողովի աշխատակազմի՝ առաջարկվող կառուցվածքի, աշխատակազմի կառուցվածքային միավորների գործառույթների ու աշխատանքների նկարագրության, հաստիքացուցակի, շենքային պայմանների, գույքի և սարքավորումների, ինչպես նաև գործունեության ապահովման ենթակառուցվածքների պահանջարկի հաշվարկի վերաբերյալ նախագծերը և ներկայացվել ՀՀ վարչապետի 2015թ. մայիսի 27-ի թիվ 447–Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբին (այսուհետ՝ Միջգերատեսչական աշխատանքային խումբ).
- մշակվել են Հանձնաժողովի հաղորդակցման ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումները.
- ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ կնքվել են քաղաքացիական կացության ակտերի գրանցման և իրավաբանական անձանց գրանցման պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյաններից, բնակչության պետական ռեգիստրից ու ճանապարհային ոստիկանության տրանսպորտային միջոցների հաշվառման համակարգից, ինչպես նաև անշարժ գույքի գրանցամատյանից Հանձնաժողովին տվյալների տրամադրման ձևաչափի, տեխնիկական պարամետրերի, էլեկտրոնային համակարգերի համակցման վերաբերյալ հուշագրեր.
- Հանձնաժողովի աշխատակազմի ձևավորման մասով մշակվել և Միջգերատեսչական աշխատանքային խմբին է ներկայացվել ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում

կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը.

- մշակվել և հաստատվել է Հանձնաժողովի աշխատակարգը.
- փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1819-Ն որոշման մեջ, ինչի արդյունքում լրամշակվել են բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերը.
- փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1835-Ն որոշման մեջ, ինչի արդյունքում ընդլայնվել է բարձրաստիճան

պաշտոնատար անձանց հայտարարագրերի հրապարակման ենթակա տվյալների ցանկը.

• ընդունվել է ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 19-ի թիվ 145-Ն որոշումը, ինչի արդյունքում Հանձնաժողովի հայտարարագրման էլեկտրոնային համակարգը կապակցվել է ՀՀ պետական կառավարման մի շարք մարմինների էլեկտրոնային գրանցամատյաններին.

• հաստատվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրերի ներկայացման կարգը[1].

• հաստատվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով լրացման և ներկայացման (հանձնման) ուղեցույցը[2], որը նաև ինտեգրվել է էլեկտրոնային հայտարարագրման համակարգին.

• մշակվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրերի վերլուծության կարգի նախագիծը, որում նկարագրված է հայտարարագրերի վերլուծության մեթոդիկան: Այն ներառում է հայտարարագրերի գրասենյակային, մաթեմատիկական և մանրամասն վերլուծություն տեսակները, ինչպես նաև տվյալների արժանահավատության ստուգումը:

[1] Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2015թ. նոյեմբերի 13-ի թիվ 14-Ա որոշումը (http://www.ethics.am/files/legislation/241.pdf):

[2] Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2015թ. նոյեմբերի 13-ի թիվ 15-Ա որոշումը (http://www.ethics.am/files/legislation/240.pdf):

2. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2012 թվականից Հանձնաժողովն, իրականացնելով օրենքով իրեն վերապահված հայտարարագրերի ռեեստրի վարման, դրանց վերլուծության և հրապարակման գործառույթները, ձեռնամուխ է եղել էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ներդրման և դրա զարգացման աշխատանքներին:

Նորաստեղծ էլեկտրոնային համակարգն ունի բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց ռեեստր, հայտարարագրերի լրացման ու ներկայացման, վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության բաղադրիչները:

- **Բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց ռեեստրը.**

Ստեղծվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էլեկտրոնային ռեեստրը, որում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդգրկված է 744 պաշտոնատար անձ և 1001 փոխկապակցված անձ (ամուսին, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակ, ինչպես նաև համատեղ ապրող ծնող): 2012 թվականի համեմատ բարձրաստիճան պաշտոնատար անձանց թիվն ավելացել է շուրջ 4.4 տոկոսով («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով[3] բարձրաստիճան պաշտոնատար անձանց պաշտոնների ցանկի ընդլայնման արդյունքում), իսկ փոխկապակցված անձանց թիվը՝ 19 տոկոսով:

Ռեեստրում գրանցված բարձրաստիճան պաշտոնատար անձանց բաշխումն՝ ըստ խմբերի 2015թ.



- **Հայտարարագրերի լրացման ու ներկայացման բաղադրիչը**

[3] 05.02.2013թ. ՀՕ-5-Ն, 12.12.2013թ. ՀՕ-174-Ն, 19.05.2014թ.ՀՕ-30-Ն, 11.06.2014թ. ՀՕ-59-Ն օրենքները:

2014 թվականից անցում է կատարվել հայտարարագրերի առցանց լրացման ու ներկայացման համակարգին, որն ընդգրկում է ուղեցույց, հուշումներ, պարզաբանումներ, ինչպես նաև գույքի տիպական անվանումների և այլ ցանկեր: Հանձնաժողովի կողմից մշակվել և հաստատվել է հայտարարագրերի կոդավորման և պահպանման կարգը, ինչպես նաև ստեղծվել են հայտարարագրերի էլեկտրոնային գրանցման ու պահպանման (էլեկտրոնային և թղթային) քարտադարան-շտեմարանները: 2012-2015թթ. ընթացքում ստացվել և էլեկտրոնային համակարգում թվայնացվել են 5230 հայտարարագրեր:

2012-2015թթ. ներկայացված հայտարարագրերի ընդհանուր թիվը



- **Վիճակագրական հաշվետվությունների բաղադրիչը**

Էլեկտրոնային հայտարարագրման համակարգը ներառում է վիճակագրական հաշվետվություններ գեներացնող բաղադրիչ: Հաշվետվությունները ստացվում են համակարգի տեղեկատվական բազայում արտացոլված ցուցանիշների և տվյալների մշակման հիման վրա:

- **Հայտարարագրերի վերլուծության բաղադրիչը**

Էլեկտրոնային հայտարարագրման համակարգը ներառում է ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծության բաղադրիչ, որի շահագործման առաջին փուլում հնարավորություն է ընձեռնվել համակարգից դուրս բերել ռիսկային չափորոշիչների հիման վրա տիպականացված հայտարարագրեր: Անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվել հայտարարագրերում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգման, ինչպես նաև որոշ անհամապատասխանությունների բացահայտման համար: Դրա հետ մեկտեղ, կարևորվում է ՀՀ պետական կառավարման առանձին մարմինների կողմից վարվող տվյալների էլեկտրոնային բազաներին հասանելիությունն ընդլայնելու գործոնը:

2012-2015թթ. ստացված բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց 5230 հայտարարագրերը վերլուծվել են հայտարարագրերի լրացման ուղեցույցի պահանջներին համապատասխանության, ինչպես նաև դրանց ներկայացման ժամկետների պահպանման տեսանկյունից:

2014 թվականի համեմատ՝ 2015 թվականին 8.3 տոկոսով բարելավվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում հայտարարագրերի ներկայացման ցուցանիշը:

2014-2015թթ. սահմանված ժամկետում ներկայացված հայտարարագրերի թիվը



2015 թվականին օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը 2014 թվականի համեմատ նվազել է շուրջ 43.5 տոկոսով՝ 490-ից դառնալով 277:

2014-2015թթ. սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը



Էական բարելավում է նկատվում բարձրաստիճան պաշտոնատար անձանց տարեկան հայտարարագրերի ներկայացման գործընթացում: Մասնավորապես, սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը 2015 թվականին 2014 թվականի համեմատ նվազել է շուրջ 51 տոկոսով: Փոխկապակցված անձանց կողմից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը 2015 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է շուրջ 15 տոկոսով:

2014-2015թթ. սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը՝ ըստ դրանց տեսակների



Դրական միտում է արձանագրվել նաև հայտարարագրերի ներկայացման գործընթացում. չներկայացված հայտարարագրերի ընդհանուր թիվը 2015 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է շուրջ 22 տոկոսով՝ 103-ից դառնալով 80:

2014-2015թթ. չներկայացված հայտարարագրերի թիվը



2015 թվականին նախորդ տարվա համեմատ շեշտակի նվազել է պաշտոնի ստանձնման և դադարեցման չներկայացված հայտարարագրերի թիվը՝ համապատասխանաբար՝ շուրջ 3 և 4 անգամ: Այդուհանդերձ, մտահոգիչ է բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց տարեկան հայտարարագրերի չներկայացման դեպքերի աճը: Բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա հետ փոխկապակցված անձի չներկայացված տարեկան հայտարարագրերի թիվը 2015 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ երկու անգամ:

2014-2015թթ. չներկայացված հայտարարագրերի թիվը՝ ըստ դրանց տեսակների



Հայտարարագրերի լրացման ուղեցույցի պահանջներին համապատասխանության տեսանկյունից, 2015 թվականին Հանձնաժողով ներկայացված «ուղղում» ռեժիմով հայտարարագրերի ընդհանուր թիվը 2014 թվականի համեմատ նվազել է շուրջ 21 տոկոսով՝ 424-ից դառնալով 334:

Հայտարարագրերի թափանցիկությունն ապահովվում է՝ Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում (www.ethics.am) դրանց հրապարակմամբ:

ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 19-ի թիվ 150-Ն որոշմամբ ընդլայնվել է հայտարարագրերի՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը: Մասնավորապես, վերացվել են բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա հետ փոխկապակցված անձանց գույքի առանձին տեսակների համար գործարքների մինչ այդ սահմանված արժեքային շեմերը՝ կապված վերոնշյալ ցանկում ընդգրկված անշարժ և շարժական գույքի գնի, արժեթղթերի գնի (արժեքի), հանձնված և վերադարձված փոխառության չափի հետ:

2014թ. հարկային տարվա և 2015թ. մարտի 10-ից հետո ստացված բոլոր հայտարարագրերը հրապարակվել են ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման պահանջներին համապատասխան: Մինչ էլեկտրոնային համակարգը ներդնելը թղթային տարբերակով ստացված բոլոր հայտարարագրերը նույնպես թվայնացվել և հրապարակվել են:

Հանձնաժողովի դիտարկումները ցույց են տալիս, որ զգալիորեն ավելացել է Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ լրատվամիջոցների հրապարակումների թիվը՝ 2012 թվականին արձանագրված 11-ից 2015 թվականին հասնելով 80-ի: Առանձին հրապարակումների կապակցությամբ տրվել են պարզաբանումներ և տրամադրվել է տեղեկատվություն:

2012-2015թթ. լրատվամիջոցների հրապարակումների թիվը



Բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց գույքի, եկամուտների հայտարարագրման համակարգի բարելավման նպատակով վեր են հանվել օրենսդրական խնդիրներ և բացեր, նախապատրաստվել են դրանց լուծմանն ուղղված օրենսդրական առաջարկություններ, որոնք ներկայացվել են Միջգերատեսչական աշխատանքային խմբին:

Հայտարարագրման համակարգին առնչվող խախտումների համար բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների համակարգի ներդրման հարցի հետ կապված, Հանձնաժողովն ակտիվորեն համագործակցել է ՀՀ արդարադատության նախարարության հետ խնդրո առարկային վերաբերող օրինագծերի մշակման գործընթացում՝ այդ կապակցությամբ նաև միջազգային փորձի համալիր ուսումնասիրության արդյունքներով ներկայացնելով առաջարկություններ և եզրակացություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ, որոնցով նախատեսվում է վարչական պատասխանատվության միջոցների կիրառում օրենքով հայտարարագրման պարտականություն ունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա հետ փոխկապակցված անձի նկատմամբ:

Միաժամանակ, Հանձնաժողովն իր առաջարկություններն ու եզրակացությունն է ներկայացրել Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ, որի շրջանակներում առաջարկել է քննարկման առարկա դարձնել բարձրաստիճան պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա հետ փոխկապակցված անձի (օրենքով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող) հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելուց չարամտորեն խուսափելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու, կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու հանցակազմի՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում ամրագրելու հնարավորության հարցը:

3. ԷԹԻԿԱ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

Հանրային էթիկայի համակարգի զարգացման նպատակով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «SIGMA» ծրագրի միջազգային փորձագետների ներգրավմամբ մշակվել են Բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի և դրա իրականացման միջոցառումների ծրագրի նախագծերը: Բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի հետագա կիրարկումն ապահովելու նպատակով Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) օժանդակությամբ նախապատրաստական աշխատանքներ են տարվում կանոնագրքի նախագծի քննարկումների կազմակերպման, հանրային էթիկայի համակարգի վերաբերյալ միջազգային լավագույն փորձի ներկայացման, հանրապետական գործադիր մարմիններում էթիկայի հարցերով հսկողություն (վերահսկողություն) իրականացնող օղակների գործունեության ակտիվացման ուղղությամբ:

Հանձնաժողովը վերլուծել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի դրույթները միջազգային չափորոշիչների համատեքստում՝ վերհանելով օրենքի առկա բացերն ու թերությունները: Դրանք համադրվել են ճյուղային օրենսդրության համապատասխան դրույթների հետ, ինչի արդյունքում արձանագրվել է, որ օրենսդրական գործող կարգավորումների պայմաններում գործնականում կարող են առաջանել կոլիզիաներ: Այդ կապակցությամբ, նախապատրաստվել և Միջգերատեսչական աշխատանքային խմբին են ներկայացվել հանրային էթիկայի և շահերի բախման համակարգի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Հանձնաժողովն իրականացրել է «Բարձրաստիճան պաշտոնատար անձի այլ գործունեության սահմանափակումները» թեմայով ուսումնասիրություն, որի անհրաժեշտությունը պայմանավորված էր պետական կամ պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների խորհրդի կառավարման մարմիններում պաշտոնեական պարտականությունների կատարման կապակցությամբ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից եկամուտ ստանալու հանգամանքով, ինչն արձանագրվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց տարեկան հայտարարագրերում: Արդյունքում, ««Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով կանոնակարգվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի մասնակցությունը 75 և ավելի տոկոս ՀՀ մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդներին, եթե այն ուղղակիորեն առնչվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ՝ առանց վարձատրություն կամ այլ ձևով փոխհատուցում ստանալու, կամ սոցիալական երաշխիքներից, ծառայություններից ու արտոնություններից օգտվելու իրավունքի: Միաժամանակ, նախապատրաստվել են առաջարկություններ ՀՀ կառավարության՝ խնդրո առարկային վերաբերող մի շարք որոշումներում արտացոլված դրույթների վերանայման կապակցությամբ:

Հանձնաժողովի մասին հանրային իրազեկության բարձրացման, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի կանոնները, շահերի բախման իրավիճակները հանրությանն առավել ընկալելի դարձնելու նպատակով մշակվել է Հանձնաժողովի տարբերանշանը, պատրաստվել գովազդային և տեղեկատվական պաստառներ, հանրային իրազեկման չորս տեսահոլովակներ: Հայտարարագրման էլեկտրոնային համակարգին վերաբերող տեսահոլովակը տեղադրված է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում, իսկ մյուսները՝ կտեղադրվեն առաջիկայում: Դրանք նաև կցուցադրվեն հեռարձակող լրատվամիջոցներով:

2012 թվականի հունվարից 2015 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացել է 83 գրություն, որոնց տրվել են լիարժեք և համապարփակ պատասխաններ: Ընդ որում, 2012-2013թթ. ստացվել է 57 գրություն, իսկ 2014-2015թթ.՝ 26:

2012-2015թթ. Հանձնաժողովի կողմից ստացված գրություններն՝ ըստ դիմողների



2012-2013թթ. համեմատ 2014-2015թթ. Հանձնաժողովի կողմից ստացված գրությունների թվի նվազումը պայմանավորված է հայտարարագրման համակարգի էլեկտրոնայնացմամբ, հրապարակման ենթակա տվյալների շրջանակի ընդլայնմամբ, ինչպես նաև հրապարակվող հայտարարագրերի նոր էլեկտրոնային կայքէջում որոնման մատչելի համակարգի ներդրմամբ, ինչով, ըստ էության, վերացավ հայտարարագրերի պատճենները ստանալու մասին գրավոր հարցումների օբյեկտիվ անհրաժեշտությունը:

2012-2013թթ. ստացված դիմումների մեծ հատված վերաբերել է դատական ակտերի վերանայմանը կամ ենթադրյալ դատական սխալների հիմքով էթիկայի կանոնների խախտմանը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված դիմումներում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասության շրջանակից՝ դրանց հիման վրա վարույթներ չեն հարուցվել: Էթիկայի կանոնների խախտմանը կամ շահերի բախման իրավիճակներին են վերաբերել շուրջ տասը դիմումներ: Դրանց քննարկման արդյունքներով հարուցվել են չորս վարույթներ, որոնց կապակցությամբ ընդունված որոշումները հրապարակված են Հանձնաժողովի կայքէջում:

Մեկ դիմում վերահասցեագրվել է ՀՀ կառավարության առընթեր ոստիկանությանը, ինչի արդյունքում ոստիկանության երկու ծառայողների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

2014 թվականին ստացված չորս դիմումներից երեքում արծարծված հարցերն առարկայական հիմքով դուրս են գտնվել Հանձնաժողովի իրավասության շրջանակից և դրանց հիման վրա վարույթներ չեն հարուցվել: Մեկ դիմումի քննարկման արդյունքներով հարուցվել է վարույթ և արձանագրվել էթիկայի կանոնի խախտում:

2015 թվականին ստացվել են հինգ դիմումներ, որոնցից մեկի քննարկման արդյունքներով հարուցվել է վարույթ: Դիմումներից երկուսի քննարկումը սուբյեկտային հիմքով դուրս է գտնվել Հանձնաժողովի իրավասության շրջանակից, քանի որ դրանցում բարձրացվել է բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող անձի գործողություններն ու վարքագիծը քննարկման առարկա դարձնելու հարցը, իսկ մեկը՝ ժամանակագրական հիմքով, քանի որ դիմումը վերաբերել է մինչև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծին: Դիմումներից մեկում արծարծվել է շահերի բախման վիճակում որոշում կայացնելու հարցը: Այդ կապակցությամբ, պետական մարմիններից ստացված տվյալների և փաստաթղթերի հիման վրա դիմումում վկայակոչված փաստերը չեն հաստատվել:

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հանձնաժողովը զարգացրել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և կառույցների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու հանրային ոլորտի կարողությունների զարգացման ծրագրեր իրականացնող կրթական հաստատությունների հետ: Համագործակցությունը միտված է եղել էթիկայի համակարգի կարիքների գնահատմանը, զարգացման ծրագրերի համատեղ իրականացմանը, իրավական դաշտի կատարելագործմանն ու էթիկայի հարցերով կարողությունների զարգացմանը:

Միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցությունն իրականացվել է մի շարք ուղղություններով.

Համաշխարհային բանկի հետ համագործակցությունը նպատակաուղղված է եղել Հայաստանում ակտիվների հայտարարագրման համակարգի զարգացմանը, Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ու հասանելիության բարձրացմանը: ՀԲ «Պետական հատվածի արդիականացման ծրագրի» շրջանակում ապահովվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի էլեկտրոնայնացման գործընթացը: Նույն ծրագրի երրորդ փուլի՝ 2016-2018թթ. ընթացում նախատեսվում է արդեն իսկ ներդրված էլեկտրոնային հայտարարագրման համակարգում զարգացնել ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծության էլեկտրոնային համակարգը, ընդլայնել առանձին պետական մարմինների կողմից պահպանվող անհատական տվյալների բազաներին հասանելիությունը, հանրային ծառայության համակարգի օրենսդրական փոփոխությունների իրականացման արդյունքում արդիականացնել հայտարարագրման էլեկտրոնային համակարգը:

Եվրոպական միության հետ համագործակցությունը կառուցվել է պաշտոնատար անձանց էթիկայի ու վարքագծի չափանիշների սահմանման, ակտիվների և շահերի հայտարարագրման եվրոպական փորձի փոխանակման ուղղությամբ, որի շրջանակներում **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ՍԻԳՄԱ (SIGMA) ծրագրի կողմից ստացվել է** փորձագիտական ու մեթոդական աջակցություն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի մշակման գործընթացում: **Թայեքս (TAIEX) ծրագրի (Եվրոպական Հանձնաժողովի Ընդլայնման գլխավոր տնօրինության կառույցների զարգացման ստորաբաժանման գործիք)** շրջանակում հայտարարագրման համակարգի փորձի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովի անդամները ճանաչողական այցեր են կատարել Ռումինիա և Սլովենիա:

Հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցում է նաև **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Հակակոռուպցիոն ցանցի և ԳՐԵԿՈ-ի հետ**՝ հետևողականորեն կյանքի կոչելով

Հանձնաժողովին վերապահված հանձնառությունները, պարբերաբար մասնակցելով ծրագրի մոնիթորինգի աշխատանքներին և քննարկումներին:

Եվրոպայի Խորհրդի հետ համագործակցությունը կառուցվել է դատահիրավական համակարգի բարեփոխումների գործընթացում ԵԽ կողմից իրականացվող ծրագրերում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի մասնակցության հնարավորությունների ընդլայնման, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծությունների իրականացման մեթոդիկաների մշակման գործում փորձագիտական օժանդակության տրամադրման ուղղություններով: ՀՀ արդարադատության ակադեմիայում ներդրվել է հայտարարագրերի համակարգին ու կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող վերապատրաստման դասընթաց, իսկ փորձագիտական օժանդակության արդյունքում Հանձնաժողովի կողմից մշակվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց գույքի, եկամուտների հայտարարագրերի վերլուծության ուղեցույց:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համագործակցությունն ուղղված է եղել Հանձնաժողովի հանրային կապերի հաղորդակցման կարողությունների զարգացմանը: Արդյունքում մշակվել է Հանձնաժողովի՝ հասարակայնության հետ կապերի զարգացման ռազմավարությունը և անցկացվել է Հանձնաժողովի թիմի՝ հանրային կապերի կարողությունների զարգացման վերապատրաստման դասընթաց: Ստեղծվել է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջը, որի շնորհիվ ապահովվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի հրապարակումն ու Հանձնաժողովի աշխատանքի հրապարակայնությունը:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ համագործակցությունը կառուցվել է էթիկայի կրթության բաղադրիչի զարգացման և Հանձնաժողովի կարողությունների զարգացման փորձագիտական օժանդակության ուղղությամբ: Արդյունքում մշակվել է հանրային ծառայողների էթիկայի դասընթացի ձեռնարկ, պետական մարմինների և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, ՀՀ արդարադատության ակադեմիայի թվով 16 ներկայացուցիչներ անցել են վերապատրաստում պաշտոնատար անձանց (հանրային ծառայողների) էթիկայի վերաբերյալ կարճաժամկետ վերապատրաստումների ծրագրով: «Ինտեգրված փորձագետ» ծրագրի շրջանակներում 2015թ.-ից միջազգային փորձագետ Քրիստոֆ Հարսդորֆը Հանձնաժողովին տեխնիկական-փորձագիտական աջակցություն է ցուցաբերել բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի վարքագծի կանոնագրքի և էթիկայի համակարգի զարգացման այլ փաստաթղթերի մշակման գործընթացում:

Հանձնաժողովը քայլեր է ձեռնարկել այլ մարմինների կարողությունների զարգացման ուղղությամբ, այդ թվում՝ **Գերմանիայի ԴԲԲ Ակադեմիայի** հետ համատեղ կազմակերպել է հանրային ոլորտի էթիկայի վերապատրաստողների ուսուցման դասընթաց, ինչպես նաև մշակել ուսումնական ձեռնարկ, որտեղ դուրս են բերված էթիկայի կանոնների խախտումների տիպային իրավիճակներ ու դեպքեր, որոնք կներկայացվեն հանրային ծառայողների էթիկայի դասընթացների կազմակերպման համար: Ծրագրի հաջող իրականացման արդյունքում Ազգային ժողովի, Քաղաքացիական ծառայության խորհրդի, Դատավորների ընդհանուր

ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի, ՀՀ պետական կառավարման և արդարադատության ակադեմիաների և այլ մարմինների ու կազմակերպությունների ներկայացուցիչներին փոխանցվել են էթիկայի դասընթաց անցկանելու հմտություններ: Կազմակերպվել են նաև էթիկայի վերապատրաստման դասընթացներ արդեն իսկ վերապատրաստում անցած մասնագետների կողմից, որոնց մասնակցել են հանրային ծառայողներ և դատավորներ, ինչպես նաև դատավորի և դատախազի թեկնածուներ:

Հանձնաժողովը ներկայացված է **Եվրոպայի խորհրդի Արևելյան գործընկերության** «Ժողովրդավարություն, լավ կառավարում և կայունություն» թեմատիկ պլատֆորմի «Հանրային կառավարման բարեփոխումներ» պանելի համակարգման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կազմում: Հանձնաժողովի անդամները պարբերաբար հրավիրվում են մասնակցելու կարողությունների զարգացման միջոցառումների՝ ակտիվների հայտարարագրերի վերլուծության, շահերի բախման օրենսդրական գործիքակազմի և այլ թեմաներով սեմինարներին:

Հանձնաժողովը ներկայացված է նաև «**Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության** Հայաստանի մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կազմում և 2012-2015թթ. ամբողջությամբ կատարել է Բաց կառավարման գործընկերության ծրագրերով նախատեսված՝ Հանձնաժողովին առնչվող պարտավորությունները:

Ակադեմիական կառույցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում, Հանձնաժողովի անդամներն ակտիվ մասնակցություն են ունեցել հակակոռուպցիոն կրթության, քաղաքացիական հասարակության մասնակցության, գիտելիքների փոխանցման և այլ թեմաներով սեմինարներին, խորհրդաժողովներին և հավաքներին, օժանդակություն են ցուցաբերել հանրային ծառայությունում շահերի բախումը կարգավորող օրենսդրության վերլուծության գործում՝ տրամադրելով մասնագիտական խորհրդատվություն:

Հանձնաժողովը, **ՀՀ արդարադատության ակադեմիայի** հետ համագործակցության շրջանակում, առաջարկել է ներդնել հակակոռուպցիոն դասընթաց դատավորների և դատախազների թեկնածուների համար, որն հաջողությամբ անց է կացվել 2014-2015թթ. ընթացքում: Ներկայումս դատավորների և դատախազների համար նախապատրաստվում է հատուկ վերապատրաստման դասընթաց հանրային էթիկայի վերաբերյալ: Հանձնաժողովը համագործակցում է նաև **Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի** հետ՝ հանրային ծառայողների վերապատրաստման դասընթացնքերի շրջանակում իրականացնելով էթիկայի կրթության ծրագրեր:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ **ԵՄ Արևելյան գործընկերության և Եվրոպայի Խորհրդի «Լավ կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի** փորձագետների օժանդակությամբ 2014 թվականին Երևանում կազմակերպվել է «Ակտիվների հայտարարագրերի վերլուծության և հավաստիացման լավագույն փորձի ուսումնասիրություն և փոխանակում» թեմայով դասընթաց, որին մասնակցել

են կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում մասնագիտացված քաղաքացիական հասարակության միավորումների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Հանձնաժողովն, իր հերթին, զարգացրել է կարողությունները և ակտիվ մասնակցություն ունեցել միջազգային և տեղական սեմինարներին, համաժողովներին, իրականացրել փորձի փոխանակման այցելություններ, ինչպես նաև մասնակցել վերապատրաստման ծրագրերի: